

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ
ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը «ներդրումային ընկերությունների» բառերից հետո լրացնել «, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությունում և 9-րդ մասում ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»» բառերը փոխարինել ««Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին»» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: